# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2015**

“ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ” ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ

# ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունն է: Տարին կարելի է համարել շրջադարձային ՈԱԱԿ-ի անկախացման, ձեռքբերումների և միևնույն ժամանակ մարտահրավերների, ինչպես ՈԱԱԿ-ի ներքին և արտաքին գործունեության, այնպես էլ միջազգայնացման տեսանկյունից:

2015-թվականը հիշարժան է այն տեսակետից, որ հանդիսանում էր ՈԱԱԿ-ի գործող Ռազմավարական պլանով նախատեսված գործողությունների ամփոփիչ տարի: ՈԱԱԿ-ը ձեռնամուխ է եղել 2010-2015թթ. Ռազմավարական պլանի իրականացման արդյունքների ամփոփման և նոր՝ 2016-2020թթ. պլանի մշակման աշխատանքներին: Նախկին պլանի իրագործման արդյունքների և նոր ռազմավարական նպատակների և խնդիրների քննարկումներ են կազմակերպվել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի նորընտիր կազմի, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների, ՈԱԱԿ-ի աշխատակազմի, ինչպես նաև բուհերի ներկայացուցիչների և այլ արտաքին շահակիցների հետ:

ՈԱԱԿ-ը, 2014թ. ավարտի բերած նորմատիվային և կառուցվածքային հիմքերի վրա, 2015 թվականին ավարտեց հավատարմագրման շրջափուլը շուրջ մեկ ու կես տասնյակ ՀՀ ուսումնական հաստատությունների համար: ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից կայացված որոշումների հիման վրա նոր՝ 2011թ. հաստատված Հավատարմագրման կարգին և Որակի ապահովման Եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համահունչ «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան տարբեր ժամանակահատվածներով հավատարմագրում ստացան պետական և ոչ պետական 14 բուհեր, իսկ 2 բուհի հավատարմագրումը մերժվեց:

Խորացնելով համագործակցությունը շահակիցների հետ, նրանց ներգրավելով իր գործունեության տարբեր ոլորտների քաղաքականության մշակման և իրականացման մեջ՝ շահակիցների կարծիքների հիման վրա կատարվել են մի շարք փոփոխություններ հավատարմագրման գործընթացները կանոնակարգող փաստաթղթային հենքում: Այս փոփոխությունները վեր են հանվել որակի ներքին և արտաքին համակարգերում առկա մարտահրավերների վերլուծություններից և ուղղված են եղել խնդիրների հաղթահարմանը: Այդ նպատակով ՈԱԱԿ-ն օգտագործել է տեղական և միջազգային ծրագրերի ընձեռնած հնարավորություններն իր անձնակազմի, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) ներկայացուցիչների վերապատրաստումների համար:

ՈԱԱԿ-ը շարունակում է իրականացնել հետևողական քայլեր՝ ամրապնդելու իր դիրքը երկրում և ճանաչումը եվրոպական կրթական տարածքում: Հետևելով միջազգայնացման իր ռազմավարական նպատակներին՝ ՈԱԱԿ-ը իրականացրել է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները և 2015թ.-ին դիմել է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության համար:

Սույն փաստաթղթում ներկայացվում են հաշվետու տարում կատարված աշխատանքները՝ ըստ ՈԱԱԿ-ի գործունեության 2010-2015թթ. ռազմավարական պլանի ուղղությունների:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ..... 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ՈԱԱԿ-ի ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 2010-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ..... 4

1. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ..... 7

1.1. Բարձրագույն կրթության համակարգ ..... 7

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում ..... 7

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում ... 8

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում ..... 9

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր 9

1.2. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ ..... 10

1.3. Փորձագիտական բազայի ձևավորում ..... 10

1.4. Մշտադիտարկում և եզրակացություն բուհերի ինքնավերլուծությունների վերաբերյալ ..... 11

2. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ..... 12

2.1 Մարդկային ռեսուրսների կառավարում ..... 12

2.2. Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում ..... 13

2.3. ՈԱԱԿ-ի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում 13

2.4. ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման նախապատրաստում ..... 14

2.5. ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում 15

2.6. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 16

3. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 19

4. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ..... 23

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ..... 24

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծման օրվանից ՈԱԱԿ-ը, սերտ համագործակցելով բոլոր շահակիցների հետ, իրականացնում է իր հիմնական առաքելությունը մասնագիտական կրթության որակի հավաստման ոլորտում՝ բավարարելով շահակիցների պահանջներն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման միջոցով: ՈԱԱԿ-ը նաև զգալի աշխատանքներ է իրականացրել, նպաստելով մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման ներքին համակարգերի ներդրմանը և զարգացմանը: Առաջընթաց է գրանցվել ՀՀ-ում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ: Շահակիցների կողմից տրամադրված հետադարձ կապի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՈԱԱԿ-ի գործընթացները զգալի ազդեցություն ունեն մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումների վրա, ինչպես նաև վստահություն են ներշնչում բոլոր շահակիցներին:

ՈԱԱԿ-ն իր գործունեությունն իրականացրել է հետևյալ հիմնական երեք ուղղություններով՝ որակի արտաքին ապահովման, որակի ներքին ապահովման և միջազգայնացման:

**Որակի արտաքին ապահովման ոլորտ:** Մասնագիտական կրթության համակարգում կատարվել են զգալի փոփոխություններ. ուսումնական հաստատությունների մեծ մասը որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակման և ներդրման փուլից անցել է դրանց զարգացման փուլին:

Հավատարմագրման առաջին շրջափուլի հիմնական արդյունքները ՈԱԱԿ-ը դիտարկում է որպես բուհերի պատրաստակամություն՝ բարելավման պարտավորություն վերցնելու և կրթական համակարգում բարեփոխումների իրականացումը ապահովելու համար: Այսպիսի մոտեցումը մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման տիրույթում փուլային, կայուն և դրական տեղաշարժ կարող է ապահովել:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջափուլի ավարտից հետո հնարավոր է անցումն առանձին կրթական ծրագրերի հավատարմագրմանը: ՈԱԱԿ-ը մի շարք քննարկումներ է կազմակերպել հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ՝ ծրագրերի բարելավումների ուղղությամբ բուհերում տեղի ունեցող գործընթացների արդյունքների, ծրագրային հավատարմագրման անցման ՈԱԱԿ-ի քաղաքականության և կլաստերային հավատարմագրման սկզբունքների մշակման շուրջ:

**Որակի ներքին ապահովման ոլորտ:** ՈԱԱԿ-ը շարունակել է իրականացնել 2013 թվականին Համաշխարհային բանկի «Որակի ապահովման տեխնիկական աջակցություն» ծրագրի շրջանակներում Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի իրականացրած փորձնական արտաքին գնահատման զեկույցում նշված խորհրդատվությունները: Նորացվել է ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը, վերանայվել են ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափերը, այդ թվում ՄԿՈՒ համակարգի և տրանսազգային հաստատությունների համար:

Շահակիցների կարծիքների հիման վրա բարելավվել են ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման մեխանիզմները և հետադարձ կապի գործիքակազմը, այդ թվում՝ Մասնագիտական կրթության համակարգային վերլուծության հարցաշարը, որի հիման վրա ՈԱԱԿ-ն իրականացնում է երկրորդ վերլուծությունը: Ներկայումս ուսումնական հաստատությունների ներկայացրած տեղեկատվությունը վերլուծության փուլում է:

**Միջազգային ուղղվածություն:** ՈԱԱԿ-ը միջազգային մակարդակում, ակտիվ մասնակցելով տարբեր նախաձեռնություններին և միջոցառումներին, ամուր հիմքեր է ստեղծել իր գործունեության միջազգայնացման, միջազգային փորձի ընկալման, տեղայնացման և միջազգային ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ ինչպես համակարգի, այնպես էլ առանձին կառույցների և մասնագետների համար:

Ստորև մանրամասն ներկայացվում են ՈԱԱԿ-ի ձեռքբերումները համաձայն 2010-2015 թթ. Ռազմավարության, ինչպես նաև 2015 թվականին կատարած աշխատանքները՝ ըստ գործունեության ոլորտների:

# ՈԱԱԿ-ի ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 2010-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամն (ՈԱԱԿ) իր ստեղծման օրվանից ակտիվ քայլեր է ձեռնարկում մասնագիտական կրթության համակարգում բարեփոխումների խթանման և իրականացման գործում: 2008 թ. վերջին ձևավորված լինելով՝ ՈԱԱԿ-ի համար կարևոր մարտահրավերներից էին որակի ապահովման ազգային կենտրոնի՝ որպես ինստիտուտի կայացումը, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատություններում նոր մտածելակերպի և գործելակերպի խթանումը: ՈԱԱԿ-ն իր առաջնային խնդիրը դիտում էր մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման մշակույթի ստեղծումը և տարածումը ՀՀ-ում:

**ՈԱԱԿ-ի ընդհանուր ազդեցությունը մասնագիտական կրթության համակարգում՝**

- Հիմնվել է որակի արտաքին ապահովման համակարգի գործուն մեխանիզմ
- Մասնագիտական կրթական որակի ապահովման համակարգում որդեգրվել է ներքևից վերև կառուցման սկզբունքը և բարեփոխումների աստիճանաբար իրականացման և բարելավման մոտեցումը, որն ընդունվել է տարբեր շահակիցների կողմից
- ՈԱԱԿ-ը, որպես կառույց, ընդունվում է, որպես վստահելի գործընկեր իր շահակիցների շրջանում
- ՈԱԱԿ-ի կողմից որդեգրած մոտեցումները ընդունվում են հանրության կողմից, ինչպես նաև ձևավորվել է վստահություն իրականացվող բարեփոխումների նկատմամբ
- Իրականացվող որակի արտաքին ապահովման գործընթացներն ընդունվում են հիմնական շահակիցների կողմից, որպես կիրառելի և օգտակար գործընթաց
- Բուհերում ներդրվել են որակի ներքին ապահովման կառույցներ
- ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները ճանաչվում են ինչպես ազգային այնպես էլ միջազգային մակարդակում
- Որակի ապահովման մեխանիզմների կիրառման միջոցով կարևորվել է բուհերի ինքնավարության և միևնույն ժամանակ խթանվել է հաշվետվողականությունը
- Միջազգային մակարդակում ստեղծվել է հավասար գործընկերային երկխոսություն դաշտ
- Իրականացվել է մասնագիտական կրթության համակարգում միջազգային կապերի գծով աշխատանքների խթանում
- Ապահովվել են հավասար հնարավորություններ պետական և ոչ պետական բուհերի համար
- Ամրապնդվել է ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում, մասնվորապես՝ ՈԱԱԿ-ի Ուսանողության Ձայն ծրագրի միջոցով

**ՈԱԱԿ-ի ձեռքբերումները համաձայն 2010-2015 Ռազմավարական նպատակների.**

**Նպատակ 1: ՈԱԱԿ կարողությունների ձևավորում. բարելավել մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային համակարգը:**

- Մշակվել են դրամաշնորհային ծրագրեր ՈԱԱԿ-ի և բուհերի կարողությունների զարգացման համար՝ հիմնվելով որակի ապահովման համակարգի վերլուծության վրա
- Պարբերաբար իրականացվում է ՈԱԱԿ-ի անձնակազմի մասանգիտական զարգացում և մասնագիտական կրթության համակարգի տեղական և միջազգային տենդենցների վերաբերյալ տեղեկատվության բարձրացում

**Նպատակ 2: Որակի տարածքի ստեղծում. ստեղծել մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգ՝ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին:**

- Մշակվել և հաստատվել են չափանիշներ՝ որոնք ապահովում են զարգացում և բարելավում կրթության ոլորտում
- Կարևորվել է տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացման մեխանիզմը կրթական համակարգի կառավարման մեջ
- Մշակվել և հաստատվել են որակի ապահովման ընթացակարգեր և համապատասխան ֆորմալ փաստաթղթային հենք
- Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը և չափանիշները համապատասխան են Եվրոպական ուղենիշներին և չափորոշիչներին
- Ապահովվել է միջազգային փորձագետների մասնակցություն հավատարմագրման գործընթացներին, ինչպես նաև մշակվել են երկլեզու ընթացակարգեր
- Որակի արտաքին ապահովման համակարգը ճանաչվում և ընդունվում է միջազգային փորձագետների կողմից
- Իրականացվել է իրավիճակի ուսումնասիրություն՝ ինքնավերլուծությունների և փորձագիտական խմբի զեկույցների խորքային վերլուծություն
- Պարբերաբար իրականացվում են որակի ապահովման շահակիցների համաժողովներ և որակի ապահովման ֆորումներ

**Նպատակ 3: Որակի մշակույթի ձևավորում. Աջակցել ՄՈՒՀ-երում որակի մշակույթի ձևավորմանը:**

- Բոլոր բուհերում ստեղծվել կամ հզորացվել են որակի ներքին ապահովման կառույցներ և որոշ բուհերում ձևավորվել է համակարգ
- Կառավարիչները պրոակտիվ ներգրավված են որակի ապահովման գործընթացներում
- Վերանայվել են բուհերի կառավարման մոտեցումները՝ ՄՈՒՀ-երի զարգացման համակարգային մոտեցումը կարևորվել է
- Ձևավորվել է պարբերաբար ինքնավերլուծություն իրականացնելու մշակույթ
    - Կիրառվում է ուժեղ և թույլ կողմերը վերլուծելու մոտեցում
    - Անցում է կատարավում նկարագրականից վերլուծական մոտեցման
    - Սահմանվում և հստակեցվում են կրթական գործընթացների զարգացման նպատակները
    - Մեծացել է իրականացվող բարեփոխումների արդյունքների համար պատասխանատվությունը
- Բուհի տարբեր ոլորտներում կիրառվում է բենչմարքինգ /հիմնականում կրթական ծրագրերում/
- Վերաարժևորվել է որակի ներքին ապահովման ստորաբաժանումների դերը
- ՄՈՒՀ-երի և կրթական ծրագրերի կառավարման տիրույթում կարևորվում է բուհի առաքելությանը համապատասխանությունը
- Անցում է կատարվում ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցման
- Վերանայվում են ուսանողների գնահատման մեթոդները՝ շեշտադրվում է պրակտիկ հմտությունների գնահատումը
- Կրթական ծրագրերում կարևորվում է հետազոտության բաղադրիչի մեծացումը

**Նպատակ 4: Որակի ապահովման փորձագետների բազայի հիմնում:**

- ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայում ընդգրկվել են մասնագետներ տարբեր պետական և ոչ պետական բուհերից, կառավարիչներ, դասախոսներ, գործատուներ և այլն
- Բազմաթիվ վերապատրաստումների և հանդիպումների արդյունքնում ձևավորվել է փորձագետների բազա
- Գործում է նաև միջազգային փորձագետների բազա, որում ներգրավված են միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր մեծ փորձ ունեն ոլորտում, ընթացքում է միջազգային փորձագիտական բազաների միանալու գործընթացը

**Նպատակ 5: Միջազգայնացում. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ՈԱԱԿ-ի միջազգային ճանաչման համար:**

- Մի շարք միջազգային որակի ապահովման կազմակերպությունների հետ կնքվել է համագործակցության հուշագրեր
- Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ՈԱԱԿ-ի մի շարք ոլորտներում տեղայնացվել է միջազգային փորձը
- Հաստատվել են սերտ կապեր ռեգիոնալ մակարդակում

# 1. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման երկու գործընթացներով՝ Ինստիտուցիոնալ հավատարմագրում և Մասնագիտության կրթական ծրագրի (Ծրագրային) հավատարմագրում: Պարբերաբար իրականացող անկախ հավատարմագրումների միջոցով ՈԱԱԿ-ը հավաստում է ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը և մատուցվող կրթական ծառայությունների որակը՝ դրանով իսկ ապահովելով հասարակության վստահությունը կրթական համակարգի նկատմամբ: ՀՀ մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործող համակարգը ներկայումս հանդիսանում է ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մեխանիզմը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը 2015 թ.-ին որակի արտաքին ապահովման ոլորտում իրականացրել է հետևյալ գործունեությունը.

## 1.1. Բարձրագույն կրթության համակարգ

### Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2015 թվականի փետրվար ամսից սկսած ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ 2011-2015 թվականներին իրականացված հավատարմագրման գործընթացների վերաբերյալ՝ փակելով հավատարմագրման առաջին փուլը: 2015 թվականին Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ 16 բուհերի վերաբերյալ. մեկ բուհի շնորհվել է հավատարմագրում 6 տարի ժամկետով, 10 բուհերի շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով, 3 բուհ ստացել է պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով և 2 բուհերի հավատարմագրումը մերժվել է:
Որոշումները կայացվել են հետևյալ բուհերի վերաբերյալ՝

| | Բուհի անվանումը | Շնորհված հավատարմագրումը |
|---|---|---|
| 1 | Երևանի պետական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով |
| 2 | Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 3 | Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 4 | Հայաստանի ազգային ագրարային համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 5 | Երևանի «Գլաձոր» համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 6 | Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 7 | Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 8 | ՀՀ պետական կառավարման ակադեմիա | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 9 | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 10 | Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |

| | | |
|---|---|---|
| 11 | Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան | ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով |
| 12 | Հյուսիսային համալսարան | պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով |
| 13 | «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան | պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով |
| 14 | Եվրասիա միջազգային համալսարան | պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով |
| 15 | Երևանի գյուղատնտեսական համալսարան | հավատարմագրումը մերժվել է |
| 16 | Երևանի Հայբուսակ համալսարան | հավատարմագրումը մերժվել է |

«Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով» նախատեսված կարգով և ժամկետներում ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշումների վերաբերյալ դիմում-բողոք են ներկայացրել երկու ուսումնական հաստատություններ.

1) Հյուսիսային համալսարանը և
2) Երևանի Հայբուսակ համալսարանը:

## Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում

- 2015թ.-ին իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 4 բարձրագույն ուսումնական հաստատություններում. 3 պետական՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Վանաձերի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում և 2 ոչ պետական՝Եվրասիա միջազգային համալսարանում, Մովսես Խորենացու անվան համալսարանում:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը բողոքարկած Հյուսիսային և Հայբուսակ համալսարաններում իրականացվել է լրացուցիչ ուսումնասիրություններ:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած “Փորձագիտական խմբի ձևավորման կարգ”-ի պահանջներին համապատասխան՝ձևավորվել և ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցվել են փորձագիտական խմբերը: Յուրաքանչյուր փորձագիտական խումբում ընդգրկվել են 3 տեղացի, 1 միջազգային փորձագետ և 1 ուսանող: Որպես միջազգային փորձագետներ ընտրվել են՝

— **Ռոմեին Հուլպիա՝** Որակի ապահովման Նիդեռլանդական VLHORA և VLHUR կազմակերպությունների փորձագետ (Հյուսիսային և Հայբուսակ համալսարանների լրացուցիչ ուսումնասիրություն),
— **Ալան Հոու՝** Միացյալ Թագավորության Բաթ Սպա համալսարանի Կրթության և մանկավարժական հետազոտությունների դեպարտամենտի ղեկավար (Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Վանաձորի պետական համալսարաններ),
— **Միեչեսլավ Սոխա՝** Լեհաստանի պետական բարձրագույն կրթության հավատարմագրման կոմիտեի փոխնախագահ (մ. Խորենացու անվան համալսարան),
— **Պատրիկ Դեյվիդ Գրեյ՝** Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանի Հասարակական և հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հասարակական մասնագիտությունների ամբիոնի վարիչ (Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ),

Ըստ հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

1) իրականացվել են ինքնավերլուծության և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
2) սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները;
3) փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից, և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

- 2015թ.-ին ևս 3 ուսումնական հաստատություններ՝
  — Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը,
  — ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնը,
  — Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը
  դիմում-հայտ են ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու նպատակով, գործընթացը կավարտվի 2016թ.-ին:

## Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում

2015 թվականին եվրոպական առաջավոր բուհերի աջակցությամբ Վրաստանի որակի ապահովման գործակալության հետ համատեղ կազմակերպվել է «Կրթության կառավարում» մասնագիտության փորձնական հավատարմագրման գործընթաց TEMPUS-ի MAHATMA ծրագրի շրջանակներում: Գործընթացի արդյունքնում իրականացվել է փորձի փոխանակում, ուսումնասիրվել է Վրաստանի փորձը, իրականացվել է փորձագետների փոխանակում. ՈԱԱԿ-ի մեկ փորձված փորձագետ մասնակցել է Վրաստանի 4 համալսարաններում «Կրթության կառավարում» մասնագիտության կրթական ծրագրի փորձաքննության գործընթացին, իսկ Վրաստանի որակի ապահովման կենտրոնի մեկ փորձագետ մասնակցել է Հայաստանի 4 համալսարաններում նույնատիպ կրթական ծրագրերի փորձաքննությանը:

Գործընթացի արդյունքում հստակեցվել է ծրագրային հավատարմագրման փաստաթղթային հենքը:

## Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր

ՀՀ կառավարության 11.12.2014 N 1397–Ն որոշմամբ «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգում մտցված նոր փոփոխության համաձայն «հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ուսումնական հաստատությունն ՈԱԱԿ-ին է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների հաստատության կողմից հաստատված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը»:

Այդ պատճառով 2015-ին հավատարմագրում (այդ թվում՝պայմանական) ստացած 14 ուսումնական հաստատություններ ՈԱԱԿ են ներկայացրել թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: Բուհերը հիմնականում վերահաստատել են հավատարմագրման որոշումից առաջ ներկայացրած իրենց պլանները:

Հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան՝ «պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ

ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին»:
2015թ. Հավատարմագրումից հետո 6 ամիսների ընթացքում իրականացված գործողությունների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել Հյուսիսային համալսարանը:

## 1.2. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացած «Մասնագիտական կրթության բարեփոխումների 2012-2016թթ. ծրագրում» կարևորված են նաև միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումները, այդ թվում կրթության որակի ապահովումը: Սակայն, այս համակարգում դեռևս ներդրված չեն որակի ապահովման մեխանիզմները, առկա չեն որակի ներքին ապահովման կառուցվածքային ստորաբաժանումները կամ պատասխանատուներ՝ բացառությամբ որոշ հաստատությունների, որոնցում նման միավորներ ձևավորվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացված փորձնական հավատարմագրումների արդյունքում:

- 2015թ.-ին ՈԱԱԿ-ը շարունակել է ՀՀ ՄԿՈ համակարգում որակի ապահովման մեխանիզմների ներդրման ռազմավարությունը՝ ամրապնդելով երկխոսությունը համակարգի շահակիցների միջև՝ իրականացնելով.
    - հանդիպում-քննարկումներ,
    - վերապատրաստումներ,
    - աշխատաժողովներ:

- 2015թ.-ին ՈԱԱԿ-ը հանդիպումներ է իրականացրել ՄԿՈ ոլորտի պատասխանատու մարմինների հետ (ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն), որտեղ հստակեցվել են ոլորտի շահակիցների հետ հետագա համագործակցության ձևաչափերը:

- 12 տարածաշրջանային պետական քոլեջների հետ համագործակցության հաջորդ քայլով ՈԱԱԿ-ը ներկայացրել է ինքնավերլուծության լրամշակված ձևաչափ՝ նախապես ընտրված և քոլեջների հետ համաձայնեցված տիրույթների կտրվածքով, որի հիման վրա հաջորդ տարի քոլեջներն իրականցնելու են ինքնավերլուծություն, ինչին կհետևի փորձնական հավատարմագրման գործընթացը ինքնավերլուծություն իրականացրած հաստատություններում:

## 1.3. Փորձագիտական բազայի ձևավորում

ՈԱԱԿ-ի փորձագիտական բազայի ընդլայնման համար հանդիպումներ են տեղի ունենցել երևանյան և արտերկրի մի շարք բուհերում, ինչպես նաև մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ, որոնք հետագայում համալրում են ՈԱԱԿ-ի միջազգային փորձագետների բազան: Հավաքագրված ինքնակերսագրականները քննարկվել են ՈԱԱԿ-ի փորձագետների նախնական ընտրությունը իրականացնող հանձնաժողովի կողմից՝ որպես առաջին փուլի ընտրություն:

## 1.4. Մշտադիտարկում և եզրակացություն բուհերի ինքնավերլուծությունների վերաբերյալ

Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և ՀՀ ԿԳՆ ԾԻԳ կարծիք է ներկայացվել 3 ներքոնշյալ ուսումնական հաստատությունների վերանայված ինքնավերլուծությունների վերաբերյալ.

1) Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ,
2) Եվրասիա միջազգային համալսարան,
3) ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոն:

Նույն ծրագրի շրջանակներում դրամաշնորհներ ստացած 2 ռազմական ուսումնական հաստատությունում (Վ.Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտ և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա) կատարված աշխատանքների վերահսկողության նպատակով իրականացվել է մշտադիտարկում և ներկայացվել հաշվետվություն: Ուսումնասիրվել և կարծիք է տրվել նաև այդ հաստատությունների ներկայացրած ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունների վերաբերյալ:

## 2. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ուղղված է շահակիցների հանդեպ և միջազգային ասպարեզում ՈԱԱԿ-ի գործընթացների հաշվետվողականությունն ապահովելու, թափանցիկ դարձնելու կենտրոնի կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքները, ինչպես նաև ցուցադրելու՝ որքանով են ձեռք բերված արդյունքները համապատասխանում կազմակերպության նախանշված նպատակներին և նպաստում կազմակերպության գործունեության բարելավմանը:
ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման տիրույթում 2015թ.-ին գրանցվել են զարգացումներ հետևյալ ուղղություններով.

### 2.1 Մարդկային ռեսուրսների կառավարում

Համաձայն կազմակերպական կառուցվածքի՝ ՈԱԱԿ-ն ունի 3 բաժին (Ինստիտուցիոնալ և Ծրագրային փորձաքննության, Քաղաքականության մշակման ու իրականացման, ՈԱԱԿ քարտուղարություն) և վարչական ու օժանդակ կազմ:

| ՈԱԱԿ անձնակազմ | Քանակ |
|---|---|
| 1. Տնօրեն | 1 |
| 2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար | 3 |
| 3. Ավագ մասնագետ | 4 |
| 4. Մասնագետ | 5 |
| 5. Վարչական կազմ | 6 |
| 6. Օժանդակ կազմ | 3 |
| Ընդամենը | 22 |

Հաշվի առնելով, որ որակի ապահովումը ՀՀ-ում նոր զարգացող ոլորտ է՝ մրցունակ անձնակազմի հավաքագրումը մարտահրավեր է: Այդ իսկ պատճառով իր առաքելությունն իրականացնելու, գործունեության որակն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը հաշվետու տարում՝

- Վերանայվել է ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների (ՄՌ) քաղաքականությունը և դրա հիման վրա մշակվել է նոր՝ առավել ամբողջական մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն, որը քննարկվել է ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ: ՈԱԱԿ ՄՌ նոր կառավարման քաղաքականությունը իր մեջ ամբողջացնում է նաև անձնակազմի գնահատման և զարգացման, ինչպես նաև կադրերի հավաքագրման և գործընթացների կառավարման համակարգերը:
- Վերանայվել են պաշտոնի անձնագրերը և մշակվել նոր՝ առավել ընդգրկուն աշխատանքային նկարագրեր: Աշխատանքային նկարագրերին ծանոթացել են աշխատողները, անցկացվել են քննարկումներ,
- Մշակվել է էթիկայի և վարվելակերպի կանոնները, որոնք դրվել են քննարկման ՈԱԱԿ աշխատակազմի հետ,
- Մեծ ուշադրություն է դարձվում ՈԱԱԿ-ի կադրերի վերապատրաստումներին, և 2015թ. նույնպես մի շարք վերապատրաստումներ, աշխատաժողովներ են տեղի ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան (այդ թվում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Շվեդիա, Բելգիա, Ավստրիա, Վրաստան և այլն) երկրներում: ՈԱԱԿ-ի աշխատակիցները վերապատրաստումների են մասնակցել տարբեր թեմաներով՝ կրթական վերջնարադյունքների գնահատում, տարնսազգային կրթության հիմնահարցեր, բուհ-գործատու համագործակցություն, ռազմավարական և կառուցվածքային կառավարում, ֆինանսաների և մարդկային ռեսուրսների կառավարում և այլն:
- Պարբերաբար իրականացվել են հարցումներ պարզելու անձնակազմի բավարարվածությունը՝

- աշխատանքային միջավայրից (89 %),
- ինքնազարգացումից և մասնագիտական առաջխաղացումից (89 %),
- աշխատանքային ծանրաբեռնվածությունից (78 %),
- հանձնարարականների հստակությունից (67 %),
- որոշումների կայացման գործընթացում ներգրավվածությունից (67 %):

Շարունակվում են աշխատակիցների մասնագիտացումն ըստ ոլորտների. յուրաքանչյուր մասնագիտական ոլորտ առավել խորը վերլուծելու նպատակով, անհրաժեշտություն առաջացավ ոլորտների ուսումնասիրությունը բաշխել ըստ աշխատակիցների՝ դրանով իսկ նպաստելով վերջիններիս որևէ ոլորտում նեղ մասնագիտացմանը (օր.՝ կրթական ծրագրեր, ուսանողների գնահատում, դասախոսական կազմ, միջազգայնացում, հետազոտություն, որակի ներքին ապահովում և այլն): Ոլորտային ուսումնասիրությունների արդյունքնում՝

- Վերհանվել են բուհերի գնահատման համակարգի հիմնախնդիրները, կրթական ծրագրերում առկա բացթողումներն ու մարտահրավերները, բուհերի մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարման հիմնահարցերը, տրանսազգային կրթության որակի ապահովման հեռանկարները ՀՀ-ում և այլն,
- Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, դուրս են բերվել լավագույն փորձի օրինակներ և ներկայացվել շահակիցներին,
- Վերհանված հիմնահարցերի և լավագույն փորձի հիման վրա, ըստ տիրույթների, մշակվել են ուղենիշեր հավատարմագրման գործընթացն արդյունավետ կազմակեպելու համար,
- Լրամշակվել են նաև փորձագետների վերապատրաստման փաթեթները:

## 2.2. Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում

Ներկայումս ՈԱԱԿ-ն իր տրամադրության տակ ունի բավարար նյութատեխնիկական ռեսուրսներ իր առաքելության իրականացման, ռազմավարական խնդիրների լուծման և ընթացիկ գործընթացների կազմակերպման համար: Առկա ռեսուրսներն օգտագործվում են ըստ նպատակի՝ բաժինների առօյա աշխատանքների, հավատարմագրման գործընթացների կազմակերպման, միջազգային փորձագետներին առցանց ներգրավելու, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների առցանց ներկայությունն ապահովելու (երկրից բացակայելու դեպքում), բուհերի ներկայացուցիչների և ՈԱԱԿ աշխատակիցների հեռավար վերապատրաստումներ, տարատեսակ հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար:

ՈԱԱԿ-ի շենքային և նյութատեխնիկական բազայի կիրառելիությունն ու արդյունավետությունը գնահատելու նպատակով պարբերաբար իրականացվել են հարցումներ: Ինչպես ցույց են տալիս հարցումների արդյունքները, բոլոր աշխատակիցները կարծում են, որ ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով և պայմաններով (87%) իրենց պարտականություններն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

## 2.3. ՈԱԱԿ-ի թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

ՈԱԱԿ-ն առանձնակի կարևորում է իր գործունեության թափանցիկությունը կրթական հանրության և հաշվետվողականությունը բոլոր շահակիցների առջև: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, պլանավորվող գործողությունների և մշակվող փաստաթղթերի լայն քննարկումները ոլորտի շահակիցների հետ, գործող չափանիշների, ձևաչափերի, ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հասանելիության ապահովումը, տարատեսակ խորհրդատվությունների, վերլուծությունների և հաշվետվությունների հրապարակումը կոչված են նպաստելու հասարակության վստահության ամրապնդմանը մասնագիտական կրթության համակարգի և ՈԱԱԿ գործունեության նկատմամբ:

2015 թվականին ավարտվել և հրապարակվել է ՈԱԱԿ-ի նորացված կայք-էջի հայերեն և անգլերեն տարբերակները, որը նպատակ ունի ամբողջական և համապարփակ տեղեկատվություն տարածել ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Ինչպես որ նախատեսված է Հավատարմագրման կարգում, ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կայացրած որոշումներից հետո ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ-ի եզրակացությունները և հավատարմագրում շնորհելու կամ մերժելու մասին Հանձնաժողովի որոշումները հրապարակվել են ՈԱԱԿ-ի կայքէջում և հասանելի են դարձել բոլոր շահակիցների համար: Ներկայումս հրապարակված են 16 ուսումնական հաստատությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն է տրամադրում «Հավատարմագրման պետական գրանցամատյանը», որը նույնպես մշակվել և 2015թ. հասանելի է դարձել ՈԱԱԿ-ի կայքէջում:

2015 թ.-ին վերջնականացվել է կառույցի ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը, աշխատակազմի համար համակարգի հնարավորությունների և դրանից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումներ են իրականացվել:

## 2.4. ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման նախապատրաստում

Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային կառույցների վստահությունը բարձրացնելու նպատակով, ՈԱԱԿ-ը 2015թ.-ին դիմել է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամակցության և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցվելու համար: ENQA-ի կողմից արտաքին գնահատումը թույլ կտա հստակեցնել՝ որքանով են իրականացվող գործընթացները համապատասխանում Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես ՀՀ-ում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից:

Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցությանը նախապատրաստվելը նաև ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականցվող Twinning ծրագրի վերջնանպատակներից է: Ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի գործունեությանը ծանոթացել և վերապատրաստումներ են իրականացրել մի շարք միջազգային փորձագետներ: Հանդիպումների արդյունքում մշակվել է Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) համաձայն ՈԱԱԿ-ի SWOT վերլուծությունը, որը քննարկվել է միջազգային փորջագետների հետ: Համաձայն փորձագետների կարծիքի՝ ՈԱԱԿ-ը լիովին տիրապետում է ոլորտի արդի հիմնախնդիրներին, կարողացել է ստեղծել անհրաժեշտ պայմաններ որակի մշակույթի ձևավորման համար և ունի համապատասխան փաստաթղթային հենք և պոտենցիալ դիմելու Որակի ապահովման եվրոպական ասոցիոցիային լիիրավ անդամակցության:

Հաշվետու տարում մշակվել է նաև ինքնավերլուծության իրականացման պլանը, ձևավորվել են աշխատանքային խմբեր, իրականացվել է ESG-ի չափանիշների և ՈԱԱԿ-ի հավատարմագրման չափանիշների քարտեզագրում և սկսվել է բուն ինքնավերլուծության գործընթացը՝ ՈԱԱԿ-ի

մշակումների և գործունեության համապատասխանությունը ESG չափանիշներին ցուցադրելու համար: Ինքնավերլուծության նպատակով իրականցվում են՝

- Տվյալների հավաքագրում, ընդհանրացում և վերլուծություն,
- Փաստաթղթային հենքի վերջնականացում և թարգմանություն:

Գործընթացը դեռևս ընթացքի մեջ է: Ըստ պայմանագրում նշված ժամանակացույցի հունիս ամսին ՈԱԱԿ-ի վերջնական ինքնավերլուծության զեկույցը կներկայացվի ENQA, հոկտեմբեր ամսին տեղի կունենան փորձագիտական այցը ՈԱԱԿ, իսկ 2017թ.-ի հունվար – փետրվար ամիսներին կկայացվի որոշում ՈԱԱԿ-ի անդամակցության վերաբերյալ: EQAR-ում գրանցման գործընթացը ըստ ժամանակացույցի պլանավորված է 2017թ.-ին:

## 2.5. ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում

Հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով մշտապես կատարվում են իրականացված գործընթացների արդյունավետության վերլուծություն: Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, ուժեղ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու ողջ գործընթացը: 2015 թվականին իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատումն ու վերլուծությունն իրականացնելու նպատակով ըստ հավատարմագրման գործընթացի առանձին փուլերի (ինքնավերլուծություն, նախնական գնահատման գործընթաց, փորձագիտական այց, փորձագիտական զեկույց) անցկացվել է անանուն հարցում հավատարմագրված բուհերի և տեղացի ու միջազգային փորձագետների շրջանում: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատումն ըստ փուլերի ներկայացված է ստորև.

1. Ինքնավերլուծության գործընթաց (100 %),
2. Նախնական գնահատման գործընթաց (98 %),
3. Փորձագիտական այց (100%),
4. Փորձագիտական զեկույց (85 %):

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին (օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ունենիշներ, ձևաչափեր և այլն)՝ թե տրամադրված փաստաթղթերն որքանո՞վ են բավարար արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար: Փորձագետների 75% բավարար է գանահատել փորձագետին տրամադրվող փաթեթի արդյունավետությունը, մասնավորապես նշելով «Փաթեթն իր մեջ հիմնական գծերով ներառում է այն հարցերն ու պահանջները, որոնք անհրաժեշտ են փորձաքննությունը բավարար մակարդակով իրականացնելու համար»:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (56.3%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (62.5%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (81.3%):

Հիմք ընդունելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը: Արդյունավետ կերպով դուրս են բերվել այն հիմնախնդիրները/հարցերը, որոնք բավարար կերպով ներկայացված չեն, խնդրահարույց են և ենթակա են ուսումնասիրման փորձագիտական այցի ընթացքում: Փորձագետների պնդմամբ «Չափանիշներն ու չափորոշիչները լավ են կազմված և ընդգրկում են հիմնական հարցերի

շրջանակը, որոնք թույլ են տալիս նախնական գնահատում իրականացնել պատշաճ մակարդակով»:

Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական այցի արդյունավետությունը և թե որքանո՞վ են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը՝ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (75%), առանձին հանդիպումների արդյունավետությունը (62.5%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (75%): Անդրադարձ է կատարվել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե): Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետների 68.8% բավարարված է փորձագիտական խմբի զեկույցի ձևաչափով: Նշվել է, որ ձևաչափը բավականին հստակ է և թույլ է տալիս համակարգված ձևով ներկայացնել ամբողջական տեղեկատվությունը:

Ընդհանրացնելով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքները և փորձագետների դիտարկումները՝ կարելի է փաստել, որ կրթական համակարգի բարելավման և զարգացման գործում հավատարմագրման գործընթացի ազդեցությունը բավական մեծ է: Հաստատությունները հավատարմագրման գործընթացը համարում են արդյունավետ գործիք իրենց գործունեությունը կանոնակարգելու և հստակեցնելու տեսանկյունից: Փորձագիտական զեկույցները կարևոր դեր են խաղում բուհի թույլ, ուժեղ կողմերը և մատահիրավերները բացահայտելու տեսնակյունից: Տեղացի և միջազգային փորձագետների կարծիքով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացները կազմակերպվել են բարձր պրոֆեսիոնալիզմով. միջազգային փորձագետները մասնավորապես գոհունակություն են հայտնել փորձագիտական խմբի ղեկավարների, համակարգողների պատրաստված լինելու վերաբերյալ: Փորձագետները նշել են նաև «Առաջարկում եմ այդպես արդար շարունակել գործը մինչև վերջ»:

2015թ.-ին, նախապես հստակեցված ուսումնասիրության ուղղություններով և ընտրված մեթոդներով, իրականացվել է **ՀՀ մասնագիտական կրթական համակարգի երկրորդ համակարգային վերլուծություն**: Հետազոտության հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել, թե՝

- հավատարմագրման գործընթացը և որակի ապահովման հաստատված գործընթացներն ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել ՀՀ մասնագիտական կրթական համակարգում տեղի ունեցող զարգացումների վրա,
- ինչպիսի՞ն է ՄՈՒՀ-երում որակի ապահովման համակարգի առկա վիճակը և որո՞նք են հիմնական խնդիրները ինստիտուցիոնալ առումով:

Հարցմանը մասնակցել են ՀՀ տարածքում գործող բոլոր պետական և ոչ պետական բուհերը, 12 տարածաշրջանային քոլեջներն ու ՈԱԱԿ-ի գործընթացներում ներգրավված մյուս ՄՄՈՒՀ-ները: Ստացված տվյալներն ամբողջացնելու նպատակով իրականացվել են ֆոկուս խմբային հանդիպումներ տարբեր շահակիցների հետ:

Ներկայումս իրականացվում է արդյունքների համեմատություն 2011թ.-ին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված առաջին համակարգային վերլուծության հետ՝ տեսնելու զարգացման միտումները և գնահատելու համակարգային փոփոխությունները:

## 2.6. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Նորմատիվային ակտերում տեղի ունեցած փոփոխությունների, արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի

և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

2014 թվականին ՈԱԱԿ-ի կողմից մշակված առաջարկությունների հիման վրա 2015 թվականին հաստատվել է.

1. **«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Կանոնադրությունը:** Լրամշակված Կանոնադրությունը հստակեցնում է ՈԱԱԿ-ի նպատակները և գործառույթները, ավելացնում նրա անկախությունը ՀՀ կառավարությունից և նրա լիազոր մարմնից, նախատեսում է փոփոխություն ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի քանակական և ներկայացուցչական կազմում և նախագահի ընտրության ձևում:
2. **«Հավատարմագրման պետական գրանցամատյանի վարման կարգը»**: Հավատարմագրման պետական գրանցամատյանը հնարավորություն է տալիս խորհրդատվական տեղեկատվություն տրամադրել հանրությանը, տեղական, միջազգային և այլ շահագրգիռ կազմակերպություններին հավատարմագրված ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի մասին:
3. Հոգաբարձուների խորհրդի դրական կարծիքի հիման վրա հաստատվել և տպագրվել է **«ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը»**: Ձեռնարկը միտված է համակարգելու շահակիցների միջև փոխհարաբերությունները: Ձեռնարկի վերանայման համար հիմք են հանդիսացել իրավական ակտերի փոփոխությունները, ՀՀ մասնագիտական կրթության համակարգի կարիքների գնահատումն ու իրավիճակի վերլուծությունը, շահակիցների (ազգային և միջազգային) հետադարձ կապն ու կարիքների ուսումնասիրությունը: Միջազգային փորձագետների կարծիքի հիման վրա ձեռնարկում տեղ է գտել ՀՀ մասնագիտական կրթական համակարգի նկարագրությունը: Ձեռնարկում մանրամասն նկարագրված են նաև Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, ՄՈՒՀ-երի և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, ընթացակարգերը, դրանց տևողությունները, ինչպես նաև ՈԱԱԿ-ի, փորձագետների և ՄՈՒՀ-երի պատասխանատվությունների և պարտավորությունների շրջանակը:
4. Վերանայվել և լրամշակվել են հավատարմագրման գործընթացը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը և ձևաչափերը՝
   - ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը (հայերեն և անգլերեն լեզուներով)՝
     - ընդհանուր վերանայում,
     - տրանսազգային կրթություն իրականացնող հաստատությունների համար,
     - միջին մասնագիտական կրթության համակարգի հաստատությունների համար,
   - ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափը (հայերեն և անգլերեն լեզուներով)
   - հավատարմագրման փաթեթում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը,
   - ՈԱԱԿ-ի եզրակացության ձևաչափը,
   - Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ձևաչափը,
   - ինստիուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի ձևաչափը,
   - ծրագրային հավատարմագրման փորձագիտական զեկույցի ձևաչափը,
   - փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացման հաշվետվության ուսումնասիրման շրջանակը:
5. Հաշվետու տարում սկսվել են **ՈԱԱԿ-ի որակի ձեռնարկի** մշակման աշխատանքները: Մասնավորապես որոշվել է մշակման մեթոդաբանությունը, բովանդակությունը և տվյալների հավաքագրման մեխանիզմը: Որակի ձեռնարկի ստեղծման, ինչպես նաև հետագա աշխատանքների ընթացքի վերաբերյալ պարբերաբար քննարկումներ են անցկացվել տնօրենի և անձնակազմի հետ:

6. 2015 թվականին մեկնարկել են նաև ՈԱԱԿ-ի **2010-2015 թվականների Ռազմավարական ծրագրի** վերլուծության աշխատանքները: Քննարկումներ են եղել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի նորընտիր կազմի, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների, ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ: Քննարկումներ են եղել նաև արտաքին շահակիցների շրջանում: Հանդիպումների ժամանակ ներկայացվել է թե անցած 5 տարիների ընթացքում ՈԱԱԿ-ն որքանով է իրականացրել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները, վեր են հանվել ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում բացահայտված խնդիրները, օրենսդրական բացերը, քննարկվել են դրանց լուծման հնարավոր տարբերակները: Ռազմավարական ուղղությունները որոշելիս, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են նաև հանրային վստահության ամրապնդմանը միտված քայլերը, ինչպես նաև ՈԱԱԿ գործունեության ծավալման հնարավորությունը ՀՀ տարածքից դուրս:

## 3. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈԱԱԿ-ը իր ռազմավարական կարևոր նպատակ է համարում շահակիցների հետ սերտ համագործակցության խորացումը և բազմազանեցումը՝ որպես մասնագիտական կրթության ծառայությունների շարունակական բարելավման մեխանիզմ: ՈԱԱԿ-ի ձեռքբերումները շատ բանով պայմանավորված են շահակիցների հետ ամուր համագործակցությամբ: Վերջիններս ներգրավված են ՈԱԱԿ-ի գործունեության ոլորտների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Տարբեր թիրախային խմբերի հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, աշխատաժողովներ տարբեր թեմաների շուրջ հետևյալ նպատակներով՝

- հետադարձ կապ ապահովելու,
- ՈԱԱԿ-ի գործունեության հաշվետվողականությունն ապահովելու,
- իրականացվող գործընթացների և միջոցառումների վերաբերյալ իրազեկելու,
- համակարգային խնդիրները և որակի ապահովման տիրույթում վերջին զարգացումները քննարկելու,
- կրթական համակարգի վերաբերյալ հավաստի տվյալներ հավաքագրելու,
- շահակիցներին ՈԱԱԿ-ի գործընթացներում ներգրավելու համար:

Շահակիցների հետ համագործակցության ոլորտում 2015թ.-ի ՈԱԱԿ-ի ձեռքբերումները հետևյալն են՝

- պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ տարբեր շահակիցների հետ (դասախոսներ, ՄՈՒՀ- երի վարչական անձնակազմ, որակի ապահովման պատասխանատուներ, ուսանողներ, գործատուներ, եվրոպական և ազգային ՄՈՒՀ-երի շրջանավատներ) միտված՝
    - ՄՈՒՀ-երի կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումներին,
    - կրթական ծրագրերում վերջնարդյունքահեն կրթության սկզբունքների ներդրման և իրականացմանը,
    - ՀՀ-ում տրանսազգային կրթության որակի ապահովման քաղաքականության, չափանիշների և չափորոշիչների հստակեցմանը,
    - որակավորումների ազգային շրջանակին կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցմանը,
    - ECTS կրեդիտների բաշխման քաղաքականությանը,
    - գործատու-բուհ կապի ամրապնդմանը,
    - հետբուհական կրթության որակի ապահվմանը,
    - ուսանողների և դասախոսների շարժունությանը,
    - Զալցբուրգյան սկզբուներին համապատասխան ասպիրանտական ծրագրերի վերանայմանն ու բարելավմանը,
    - ՄՈՒՀ-երի միջազգայնացման խթանմանը:

Նշված հանդիպումների արդյունքում մշակվել են՝

1. Ուղեցույց բուհերում կրթական ծրագրերում վերջնարդյունքահեն կրթության սկզբունքների իրականացման, ինչպես նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանեցմանը Որակավորումների ազգային շրջանակին,
2. Խորհրդատվություններ հետբուհական կրթությունը Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանեցնելու համար, այնուհետև մշակվել է ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշներ, չափորոշիչներ և ուղենիշներ,
3. Տրանսազգային կրթության որակի ապահովման քաղաքականություն, որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ:
4. 2015 թվականին Որակավորումների ոլորտային շրջանակի ձևավորման ուղղությամբ կազմակերպվել են հանդիպումներ տարբեր շահակիցների հետ: Աշխատանքներ են իրականացվել «Տեղեկատվական տեխնոլոգիաների», «Կառավարման», ինչպես նաև

«Կրթության» ոլորտների որակավորումների մշակման ուղղությամբ: Հանդիպումներ և կլոր սեղան քննարկումներ են եղել «Տեղեկատավական տեխնոլոգիաներ» ոլորտի կազմակերպությունների գործատուների հետ, որտեղ քննարկվել է, թե գործատուներն ինչպիսի մասնագետներ են ակնկալում ստանալ բուհերից: Քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ գործատուները հատկապես կարևորում են ուսանողների պրակտիկ գիտելիքները, ինքնազարգացման ունակությունները, հաղորդակցման հմտությունները:

- 2015 թ. ընթացքում ՈԱԱԿ-ում վերապատրաստում են անցել ՄԿՈՒ-ի 35 աշխատակից՝ 11 տարածաշրջանային պետական քոլեջներից և Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջից:Վերապատրաստումները ուղղված էին կրթության որակ և որակի ապահովում, որակի մշակույթի ձևավորում և զարգացում, ինքնավերլուծություն, հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ թեմաների ուղղությամբ տեղեկատվության հաղորդմանը: Դատելով գնահատման արդյունքներից՝ վերապատրաստումները բավականին արդյունավետ են անցել: Այն համապատասխանել է վերապատրաստվողների 92%-ի ակնկալիքներին, վերապատրաստման նյութը մասնակիցների կողմից գնահատվել է մատչելի և միջին մասնագիտական հաստատություններում կիրառելի: Բոլոր մասնակիցները շատ բարձր են գնահատել մատուցման մեթոդները: Դրա հետ մեկտեղ կարճ ժամանկահատվածի ընթացքում ծավալուն տեղեկատվության տրամադրումը մի մասի կողմից դիտվել է որպես թույլ կողմ:

- 2015թ. ՈԱԱԿ-ի փորձագետների բազան ընդլայնելու և վերապատրաստման դասընթացները մեկնարկելու նպատակով 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվել և իրականացվել են սկսնակ փորձագետների համար բազային վերապատրաստման դասընթացներ երկու խմբերի՝ ուսանողների և ԱՄՆ կրթական ծրագրերի շրջանավարտ դասախոսների համար: Մշակվել են փորձագետների վերապատրաստման հայեցակարգ և տիպային ծրագիր: Վերապատրաստումն իրականացվել է բազային վերապատրաստման տիպային ծրագրի պահանջներին համապատասխան:

- ՈԱԱԿ-ում վերապատրաստումներ են կազմակերպվել փորձագիտական այցի համար արդեն ընտրված փորձագետների համար: 2015 թ. վերապատրաստվել է 36 փորձագետ: Նրանցից 24-ը մասնակցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման, 12-ը՝ ծրագրային: Փորձագետների կազմում 48%-ը եղել է պրոֆեսորադասախոսական կազմի, 17%-ը՝ կրթության կառավարման ոլորտի, 6%-ը՝ մասնագիտական կամ տնտեսության ոլորտի ներկայացուցիչ, 26%-ը՝ ուսանող, 3%-ը՝ գործատու: Ընտրված փորձագետներից 51%-ը փորձագիտական աշխատանքում ներգրավվել է առաջին անգամ, 26%-ը երկու անգամ և 23%-ը երեք և ավելի անգամ: Վերապատրաստումների ընթացքում ծրագրին համապատասխան փորձագետներին ներկայացվել են այն գործառույթները, որոնք պետք է իրականացվեն ՄՈՒՀ-ի որակի ներքին կամ արտաքին ապահովման գործընթացները գնահատելիս, մեթոդները, որոնց միջոցով պետք է իրականացվի ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացի գնահատումը: Վերապատրաստումից հետո արված հարցումները ցույց տվեցին, որ մասնակիցների 69%-ը բավարարված է ՈԱԱԿ-ի վերապատրաստումներից: Դրա հետ մեկտեղ վերապատրաստվածների 78%-ը վերապատրաստումները օգտակար և համակարգված է համարել: Վերապատրաստվողների գերակշիռ մասի կարծիքով դրանք եղել են նպատակային և թիրախավորված: Վերապատրաստումների 70%-ը բավարարված է եղել վերապատրաստումների արդյունքում փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորման տեսանկյունից: Բոլոր վերապատրաստվողները բավարարված են եղել տրամադրվող տեղեկատվությամբ: Վերլուծելով վերապատրաստումների վերաբերյալ փորձագետների արձագանքը կարելի է եզրակացնել, որ փորձագետները գոհ են եղել վերապատրաստումների ընթացքում ստացած տեսական գիտելիքներից և տրամադրված փաթեթներից: Բաց հարցերի ուսումնասիրությունները ցույց տվեց, որ մի մասի դժգոհությունը պայմանավորված էր վերապատրաստումների կարճ

տևողությամբ, որի ընթացքում նրանց մոտ չձևավորվեցին անհրաժեշտ հմտություններ փորձագիտական աշխատանք կատարելու համար:

- Շահակիցների հետ փոխհարաբերություններում կարևոր դերակատարում են ունենում նաև ՈԱԱԿ-ի համակարգողները: Հավատարմագրման գործընթացին մասնակցած ՈԱԱԿ-ի բոլոր համակարգողները պարբերաբար վերապատրաստվում են: ՈԱԱԿ-ի ղեկավարությունը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպել, խորհրդատվություն ապահովել, օժանդակել կոնֆլիկտային իրավիճակների ծագման դեպքում: Հավատարմագրման գործընթացներին մասնակցած փորձագետների հարցման արդյունքների համաձայն համակարգողների աշխատանքը արժանացել է բարձր գնահատականի: Այսպես, հարցման մասնակիցների 100%-ի կարծիքով համակարգողները հետևել են գործընթացի սահուն ընթացքին և արդյունավետ իրականացմանը, պաշտպանել են փորձագիտական խմբի անդամների իրավունքները, չպլանավորված դեպքերում կայացրել են որոշումներ և տվել լուծումներ, ունեն բավարար կամ լիակատար հաղորդակցման, կառավարչական և կազմակերպչական հմտություններ, թիմային աշխատանքի կարողություն, համբերատարություն, 92%-ի կարծիքով կատարել են իրավիճակի վերլուծություն:

- ՈԱԱԿ-ը՝ կարևորելով ուսանողների դերը որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացում, պարբերաբար իրականացրել է հանդիպումներ և վերապատրաստումներ տարբեր բուհերի ուսանողների հետ՝ քննարկելով որակի ապահովման գործընթացներում վերջիններիս ներգրավման մեխանիզմները, կրթության որակի բարձրացման գործընթացում ուսանողների դերի կարևորությունը: Պարբերաբար իրականացվող հանդիպումների արդյունքում ուսանողները ծանոթացել են ՀՀ-ում որակի ապահովման գործընթացներին, իսկ ՈԱԱԿ-ը ստեղծել է ուսանողների բազա՝ հետագայում՝ հավատարմագրման գործընթացներում վերջիններիս ներգրավելու միտումով:

  Կազմակերպել են պրակտիկաներ տարբեր բուհերի «Կրթության կառավարում» մասնագիտության ուսանողների համար:

- ՈԱԱԿ-ը 2015 թվականի կատարած աշխատանքներն ամփոփեց «Մասնագիտական կրթության որակի ապահովում. որքանով է ուսուցումն արդյունավետ» թեմայով որակի ապահովման շահակիցների երրորդ ֆորումի միջոցով: Ֆորումի նպատակն էր քննարկել մասնագիտական կրթության որակի ապահովման ներկայիս զարգացումները և ձեռքբերումները Հայաստանում և արտերկրում, վեր հանել լավագույն փորձը և նպաստել դրա տարածմանը: Երկօրյա խորհրդաժողովի ընթացքում զեկույցներով ու քննարկումներով թեմային մանրակրկիտ անդրադարձան հեղինակավոր դասախոսներ և կրթության կառավարման մասնագետներ Հայաստանից, Վրաստանից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Չեխիայից և այլ եվրոպական երկրներից, ինչպես նաև գործատուներ և ուսանողներ:
  9 սեպտեմբերի նիստերում քննարկվեցին 21 թեմաներ հետևյալ հիմնահարցերի շուրջ.
  - Ուսանողների գնահատման համակարգի բարելավում,
  - Ստացած տեսական գիտելիքները բուհում սովորելու ընթացքում աշխատանքի վայրում տեղայնացնելու կարողության ձևավորում,
  - Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում,
  - Սիմուլյացիոն կրթական տեխնոլոգիաների կիրառում,
  - Բարձրագույն կրթության միջազգայնացում,
  - Կրթության որակի կառավարում:

**Շահակցի կարծիք**

*«…Միջոցառման ֆորմատն այնպիսին էր, որ ամեն ոք ազատ արտահայտվելու, կարծիք հայտնելու հնարավորություն ուներ»:*

**Խորհրդաժողովի արդյունքները.**

Խորհրդաժողովի ընթացքում երևաց հանրապետության կրթության ոլորտում իրավիճակի փոփոխություն: Եթե առաջ եվրոպացի գործընկերների կողմից հանրապետության կրթական համակարգը քննադատության էր ենթարկվում, ապա այժմ խորհրդաժողովը գործընկերային հանդիպում էր, երբ բոլոր կողմերը միմյանցից ինչ-որ բան սովորելու հնարավորություն ունեին: Խորհրդաժողովը հաստատեց, որ Վրաստանի հետ ստեղծվել է կրթության մասնագետների ռեգիոնալ հարթակ:

**Շահակցի կարծիք**

*Այս խորհրդաժողովում… արծարծված խնդիրները այս կամ այն կերպ վերաբերում են աշխարհի յուրաքանչյուր երկրի: Կարծում եմ, որ Հայաստանը ճիշտ ճանապարհին է և կարող է ցանկալի արդյունքի հասնել:*

Փոլ Հիլանդ, ՄԹ Բաթ Սփա համալսարան

Խորհրդաժողովի ընթացքում կարևորվեց ուսուցման գործընթացի անմիջական մասնակիցների՝ դասախոսների և ուսանողների պրակտիկ փորձը, և այն ունեցավ կարևոր գիտագործնական նշանակություն:

Ուսումնական գործընթացի տարբեր կողմերի՝ դասախոսների, ուսանողների, բուհի տարբեր մակարդակի կառավարիչների, գործատուների կարծիքների մեկ հարթակում միասնական քննարկումը հնարավորություն տվեց ամբողջացնել կրթության համակարգի ներկայիս վիճակը, տեսանելի դարձրեց ոչ միայն թերությունները, այլև զգալի առաջընթացը:

Հենց խորհրդաժողովի ընթացքում կրթության ոլորտի առջև ծառացած նոր մարտահրավերների և հիմնախնդիրներից բացի քննարկվեցին դրանց լուծմանը նպաստող միջոցները:

## 4. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Իր գործունեության առաջին իսկ օրվանից ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր գործունեությունը միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում:

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերը 2015թ.-ին շարունակվել են հետևյալ գործընթացների շուրջ.

- Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը դիմել է ENQA-ի լիիրավ անդամակցության, ինչպես նաև EQAR ռեգիստրում հրանցվելու համար:
- ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել INQAAHE, ENQA միջազգային ցանցերի զարգացումներին, մասնակցել է ENQA աշխատանքային խմբերում, ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում:
- Ակտիվ համագործակցում է Եվրոմիության և նախկին Խորհրդային միության երկրների որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ: Համագործակցության հուշագիր է կնքվել Ղազախստանի որակի ապահովման գործակալության հետ:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների, ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:
- ՈԱԱԿ-ը, որպես ղեկավար/համակարգող գործընկեր հաստատություն, ակտիվորեն մասնակցում է ՏԵՄՊՈՒՍ-ի 11 ծրագրերում: Ծրագրերը միտված են մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը, որակի ապահովման համակարգի ամրապնդմանը՝ անդրադառնալով համակարգում գոյություն ունեցող խնդիրներին:
- Համագործակցության հուշագիր է կնքվել Ղազախստանի որակի ապահովման անկախ գործակալության հետ:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՀՀ-ում մասնագիտական կրթության համակարգի զարգացման ստորև ներկայացվող միտումներն ու մարտահրավերները հիմնված են ՈԱԱԿ-ի նախաձեռնած մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման գործընթացների մշտադիտարկման և իրականացված հավատարմագրման գործընթացների վերլուծության, շահակիցների կարծիքների ուսումնասիրության, միջազգային փորձագետների դիտարկումների և ուսանողական հարցումների արդյունքների վրա: Խնդիրներից հատկանշական են հետևյալները.

- Ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող ոչ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերն են բավարար արդիական, իսկ իրականացումը՝ ուսանողակենտրոն: Ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները մասամբ են համապատասխանում ՈԱՇ-ի, նաև աշխատաշուկայի պահանջներին: Քիչ են ճկուն կրթական ծրագրերը, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը լիարժեք չի գործում, դասավանդման մեթոդների արդիականացումը դանդաղ է ընթանում:
- Հաստատությունները, օգտվելով օրենսդրական այն դրույթից, որ ծրագրային հավատարմագրումը կամավոր գործընթաց է, դեռևս չեն դիմում ծրագրային հավատարմագրման, որտեղ անմիջականորեն կգնահատվեն ուսանողի մասնագետ դառնալու գործընթացում առկա խնդիրներն ու խոչընդոտները և կհավաստվի մասնագետների մրցունակությունը միջազգային շուկաներում: ՈԱԱԿ-ի կողմից առաջարկվող ծրագրերի կլաստերային աուդիտը իրատեսական ճանապարհ է կրթության տարբեր բաղադրիչների բարելավման և ծրագրային հավատարմագրման նախապատրաստման համար:
- Մասնագիտական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքները դեռևս չունեն բավարար անկախություն և ֆինանսական ինքնավարություն՝ իրենց գործունեությունը պլանավորելու և իրականացնելու առումով, կառավարումը մեծ մասամբ չի իրականացվում Պլանավորում-Իրականացում-Ստուգում-Բարելավում որակի կառավարման սկզբունքով:
- Բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմը երբեմն չի բավարարում վերափոխված կրթական ծրագրերի պահանջներին, չի տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդների, բավարար չափով ներգրավված չէ հետազոտություններում: Առկա է դասախոսական անձնակազմի սերնդափոխության խնդիր: Բուհերը բավարար պայմաններ չեն ստեղծում դասախոսական կազմի վերապատրաստման և երիտասարդացման համար:
- Հաստատությունների հետազոտական և ուսումնական բազաները հիմնականում հնաոճ են և միշտ չէ, որ բավարար են հատկապես մագիստրոսական ծրագրերի իրականացման և ակնկալվող մասնագիտական վերջնարդյունքների ձևավորման համար: Կրթական և հետազոտական գործունեությունները լիարժեք փոխկապակցելու խնդիրներ կան:
- Բուհերում դեռևս ցածր է շահակիցների և հեղինակություն վայելող դասախոսների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին, որակի ապահովումը դեռևս չի դարձել մշակույթ:

«Մասնագիտական կրթության որակի ապահովում. որքանով է ուսուցումն արդյունավետ» թեմայով շահակիցների խորհրդաժողովի ընթացքում բաձրացվեցին ուսուցման արդյունավետությանը խոչընդոտող հետևյալ հիմնախնդիրները.

- Բարձրագույն կրթության համակարգը օպտիմալացման կարիք ունի, քանի որ բուհերի չափազանց մեծ քանակը իջեցնում է ուսման արդյունավետությունը: Դիմորդների թվի տարեցտարի կրճատման պայմաններում բուհերը ունեն թերֆինանսավորման խնդիր, ինչը վտանգում է ՄԿԾ-ների նպատակների իրագործումը:
- Բուհերում աշխատավարձի ցածր լինելու պայմաններում կա որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի պակաս: Օրակարգային խնդիր է մնում նաև

դասախոսների օտար լեզուների իմացությունը և կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելը: Դասախոսները հաճախ չունեն մոտիվացիա, փոխելու ուսուցման մեթոդները:

- Ուսանողների մի մասի մոտիվացիան շատ ցածր է: Դրա պատճառներից մեկը այն է, որ ՄԿԾ-ների ակնկալվող արդյունքների և աշխատաշուկայի պահանջների ճեղքվածքի պայմաններում գործազուրկ դառնալու հավանականությունը մեծ է: Մյուս պատճառը՝ բուհ ընդունվելու կարգը չի ապահովում դիմորդների և ուսանողների անհրաժեշտ որակը:
- Կրթական համակարգը հետ է մնում ժամանակակից բիզնեսի պահանջներից, բուհերի և գործատուների լեզուն տարբեր է և նրանք միմյանց հաճախ չեն հասկանում:
- Հայ հասարակությունում կա վստահության մշակույթի պակաս: Վստահության դեֆիցիտը խոչընդոտում է շահակիցների միջև արդյունավետ համագործակցությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման արտաքին խթան են հանդիսանում և նպաստում են դրանց զարգացմանը: Ուսումնական հաստատությունների հետ հարաբերություններում ՈԱԱԿ-ը հանդես է գալիս որպես գործընկեր-խորհրդատու համակարգում որակի մշակույթի ձևավորման և խորացման գործում: Հաստատությունները մեծածավալ աշխատանքներ են իրականացնում իրենց գործունեության տարբեր ոլորտներում որակի ապահովման մեխանիզմների մշակման և գործարկման ուղղությամբ, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ որակի ապահովման տարբեր բաղադրիչներ մինչ այժմ բացակայել են: